



Միրելի սրելիանաւաւանցիներ, աւարարուեց 2015 թվականը: Այն մեր քաղաքի համար բազմաթիւ հաջողությունների, ձեռքբերումների, ինչու ոչ, նաև նոր մարտահրաւերների ու անելիքների բացահայտման տարի էր: Անցնող տարում Սրելիանաւաւանը հանրության ուշադրության կենտրոնում էր: Մեր քաղաքը միացաւ «Կենտրոնական Ասիայում և Հարավային Կովկասում քաղաքների դիմակայունություն» ծրագրին: Գլոբալ քարոզարշավին միացած շուրջ 3000 քաղաքներից միայն 45-ն են ճանաչվել օրինակելի, իսկ Սրելիանաւաւանն այս առումով ԱԳՀ տարածաշրջանում միակն է: Սա մեր քաղաքին հնարավորություն կտա նվազեցնել ռիսկերն ու առավել պրոֆեսիոնալ պայքար մղել աղետների դեմ: Տարին առանձնացաւ նաև նոր բարեկամական կապերով. Ռուսաստանի Դեմիտրով և Հայաստանի Սրելիանաւաւան քաղաքների միջև համագործակցություն հաստատուեց: Քաղաքում լուծում ստացան մի շարք հիմնահիւնդիրներ: Օրակարգային հարցերն էլ քաղաքապետարանը պահեց ուշադրության կենտրոնում: Օր-օրի զարգացող մեր քաղաքում տարվա աւարտին նկատելի են մի շարք դրական փոփոխություններ:



2015-ին ևս Սրելիանաւաւանը աչքի ընկաւ իր մշակույթով ու տաղանդաւոր սրելիանաւաւանցիներով: Քաղաքի մշակույթի պալատում բացվեց քանդակագործ Սահակ Սահակյանի թանգարանը, որը լի է բացառիկ գործերով: Քաղաքում ևս երկու խաչքար տեղադրուեց, որոնք հավերժացնում են Մեծ եղեռնի անմեղ նահապետների հիշատակը: Իսկ սեսա Սրելիանաւաւանի՝ երիտասարդական մայրաքաղաք հռչակվելն աշխուժացրեց երիտասարդության կյանքը: Իհարկե կարելի է երկար թվել կատարված աշխատանքները, բայց առավել կարևոր է, որ յուրաքանչյուրս գիտակցենք, որ կատարված գործերը չպետք է մեզ բավարարեն: Անհրաժեշտ է Նոր տարում զինվել համբերությամբ, պատրաստակամությամբ ու մեր քաղաքն առավել լավը դարձնելու անհրաժեշտության գիտակցությամբ:

Միրելի սրելիանաւաւանցիներ, շնորհաւորում եմ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ: Ցանկանում եմ, որ բոլորիս փնտրում և մեր սիրելի քաղաքում 2016 թվականին գերակշռեն սերն ու ջերմությունը, փնտեսական առաջընթացն ու դրական տեղաշարժը: Այսօր մեր երկիրը քիչ ինդիքներ չունի: Սահմանին իրավիճակը շարունակում է լարված մնալ, իսկ պետության առջև, բացի հայկական բանակի կայունությունից, դրված է նաև երկրի փնտեսությունը զարգացնելու խնդիրը: Ուստի և բոլորիս պարտքն է 2016 թվականին ևս լինել միասնական, համարձակ այն մարտահրաւերների առջև, որոնք կան ու դեռ կլինեն: Թող իր զինվորին սպասող մոր աղոթքները Աստուծուն լսելի լինեն, ու Նոր տարվա հրաշքը ուղեկցի մեզ գալիք ողջ տարվա ընթացքում:

ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ  
ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՄԻՔԱՅԵԼ  
ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ